«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
info@aybschool.am
www.aybschool.am

«Այբ» դպրոց

Բաժին՝ Տնտեսական
Պաշտոնի անվանում՝ Տնտեսվարի օգնական
Աշխատանքի տեսակը՝ մշտական
Աշխատանքի կատարման վայր՝ Թբիլիսյան խճ. 11/11, Երևան, Հայաստան

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հետևել շենքի ընթացիկ սպասարկմանը, կատարել ամենօրյա շրջայցեր դպրոցի տարածքում՝ առկա խնդիրները բացահայտելու համար
- Իրականացնել ընթացիկ վերանորոգման աշխատանքները, մասնավորապես՝ կատարել դռների, պատուհանների, կահույքի և այլ գույքի վերանորոգում, կողպեքների փոխարինում, ծխնիների յուղում, շվեյցարների կարգաբերում
- Իրականացնել օդափոխության, ջեռուցման, հովացման համակարգերի ընթացիկ սպասարկման աշխատանքները՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով արտապատվիրված կազմակերպության մասնագետների հետ
- Ապահովել միջոցառումների ժամանակ գույքի տեղափոխումը, սպասարկումը
- Վերացնել առաջացած սանտեխնիկական և էլեկտրական խնդիրները
- Կազմակերպել դպրոցի կանաչապատ տարածքի ջրումը, հնձումը՝ համապատասխան տարածքի ջրման և հնձման սխեմաների,
- Խնամել շենքերի ներսի բույսերը/ծաղիկները (ջրել, սրսկել, տալ պարարտանյութ, մշակել և այլն)
- Կազմակերպել բերքատու ծառերի բերքի հավաքումը
- Ապահովել այգիների ու կանաչապատ տարածքների, ինչպես նաև դրանց մերձակա տարածքների մաքրությունը տերևներից, մոլախոտերից, վնասատուներից
- Կատարել անմիջական ղեկավարի և տնօրենի գրավոր և բանավոր այլ հանձնարարություններ

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ

- Ֆիզիկական աշխատանք կատարելու կարողություն
- Այգեգործական տեխնիկայով (խոտհնձիչներ, սղոցներ, ջրցան սարքեր, պոմպեր և այլն) աշխատելու փորձառություն/գիտելիքներ
- Թիմում աշխատելու ունակություն
- Հոգատարություն ու սեր բույսերի նկատմամբ